

**ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ  
ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔ**

**Համայնքի 2025 թվականի**

**ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ**



Կազմվել է համայնքի ղեկավարի կողմից

Հաստատվել է՝ համայնքի ավագանու որոշմամբ

2025 թ.

Բովանդակություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....

1. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՍԼԱԿԱՆԸ և ՈԼՈՐՏԱՅԻՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ.....

2. ՀԱՄԱՅՆՔԻ 2025 Թ. ԾՐԱԳՐԵՐԻ ՑԱՆԿԸ և ՏՐԱՄԱԲԱՆԱԿԱՆ ՀԵՆՔԵՐԸ (ԸՍՏ ՈԼՈՐՏՆԵՐԻ)

3. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ 2025 Թ. ԾՐԱԳԻՐԸ .....

4. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՊ-Ի ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՊԼԱՆԸ .....

5. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՊ-Ի ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ և ԳՆԱՀԱՏՄԱՆ ՊԼԱՆԸ.....

## Ներածություն

### Ներածություն

2021 թվականի դեկտեմբերին «Վարչատարածքային բաժանման մասին» օրենքի պահանջով ձևավորվեց Վարդենիս համայնքը՝ իր կազմում ներառելով 1 քաղաքային և 34 գյուղական բնակավայրեր:

Վարդենիս խոշորացված համայնքը գտնվում է ՀՀ Գեղարքունիքի մարզում, Սևանա լճի հարավ-արևելյան կողմում: Ծովի մակերևույթից միջին բարձրությունը կազմում է 2006-2008մ, կլիման խիստ է, ձմռան տևողությունը գրեթե 6 ամիս, հունվարի միջին ջերմաստիճանը  $-8^{\circ}\text{C}$ , տարեկան տեղումների քանակը կազմում է 400-500մմ: Վարդենիս խոշորացված համայնքի Այրք, Ավազան, Արեգունի, Արփունք, Ախպրաձոր, Ազատ, Գեղամարակ, Գեղաքար, Գեղամասար, Լճավան, Կախակն, Կութ, Կուտական, Մ. Մասրիկ, Տորֆավան, Վանևան, Նորակերտ, Փ. Մասրիկ, Կարճաղբյուր, Ծովակ, Խաչաղբյուր, Վարդենիս, Փամբակ, Շատվան, Լուսակունք, Մաքենիս, Ն. Շորժա, Նորաբակ, Շատջրեք, Ջաղացաձոր, Սոթք, Վ. Շորժա, Տրեստուք, Ակունք, Դարանակ բնակավայրերը բարձր լեռնային են:

Վարդենիսը Հայաստան աշխարհի հնագույն բնակավայրերից է: Այն գտնվել է Մեծ Հայքի Սյունիք նահանգի Սոթք գավառի կազմում: Համայնքի նախկին անվանումներն են եղել Վասակաշենը, Ոսկեշենը, իսկ 1969 թվականից անվանվել է Վարդենիս:

Համայնքի ինչպես քաղաքային, այնպես էլ գյուղական բնակավայրերը հարուստ են պատմամշակութային հուշահամալիրներով և հուշարձաններով, ինչպիսիք են օրինակ Մաքենյաց վանքը, Սոթի Բագիլիկ եկեղեցին, Այրքի, Կարճաղբյուրի մատուռները, դամբարանադաշտերը, Կիկլոսյան ամրոցները, խաչքարերը, Վարդենիս Սբ. Աստվածածին եկեղեցին և այլ կոթողներ: Համայնքում առանձնակի ուշադրության է արժանի Մելիք-Շահնագարյանների տոհմին պատկանող գերեզմանատունը, որը վկայում է հայ իշխանական մելիքական տոհմի իշխանությունը Սոթք գավառում՝ Մեծ Մասրիկ մելիքանիստ ավանով: Մելիք-Շահնագարյանների տոհմը սերել է Դոփյանների իշխանական տոհմից և դեռևս 15-րդ դարում առանձնացել է Դոփյաններից և իր տիրություններն էին Սոթք գավառի Մեծ Մասրիկ մելիքանիստ ավանը և Գեղարքունիք գավառի մի մասը:

Տարածաշրջանը առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում նաև Սևանա լճով, անապակ աղբյուրներով, ալպյան մարգագետիններով ու բազմաթիվ բնական հուշարձաններով:

Վարդենիս համայնքը 2021թվականի համայնքների խոշորացման երկրորդ փուլում խոշորացվեց՝ իր կազմում ունենալով 1 քաղաքային՝ Վարդենիս և 34 գյուղական՝ բնակավայրեր: Վարդենիս համայնքի կենտրոն Վարդենիս քաղաքը ՀՀ մայրաքաղաք Երևանից գտնվում է 170կմ, իսկ մարզկենտրոն Գավառից 75կմ հեռավորության վրա: Վերին Շորժա, Ներքին Շորժա, Նորաբակ, Կութ, Ազատ և Սոթք գյուղերը հանդիսանում են սահմանամերձ համայնքներ: Համայնքի Վարդենիս, Ակունք, Դարանակ, Լուսակունք, Խաչաղբյուր, Ծովակ, Կարճաղբյուր, Մեծ Մասրիկ, Նորակերտ, Շատվան, Վանևան, Տորֆավան, Փամբակ և Փոքր Մասրիկ բնակավայրերը բարձր լեռնային են:

Համայնքի վարչական տարածքը կամում է 111.658 հա:

Վարդենիս համայնքն ունի 40.030 բնակիչ:

**Համայնքի բնակչության 19.446-ը կանայք են, 20.582-ը՝ տղամարդիկ:**

**Բնակչության տարիքային կազմը՝**

- 0-6 տարեկանները 4227
- 6-18 տարեկանները 6986
- 18-65 տարեկանները 23697
- 65-ից բարձր տարեկանները 5120
- Նպաստառուները 145-ն են, որոնցից 44-ը սոցիալական նպաստ ստացողներն են, 101-ը՝ ընտանեկան:
- Հատուկ կարիքներ ունեցող խմբերը՝
- Հաշմանդամություն ունեցող անձինք 2525 են, որոնցից 1173-ը կանայք են, 1352-ը՝ տղամարդիկ:
- Կենսաթոշակառուները 665-ն են, որոնցից 359-ը կանայք են, 303-ը տղամարդիկ:
- Միաձնող երեխաները 31-ն են, որոնցից 15-ը աղջիկ, 16-ը տղա:
- Նպաստառու ընտանիքները 316 են, որից 80-ը՝ կին գլխավորով ընտանիքներ են,
- Ժամանակավոր կացարաններում բնակվող ընտանիքները 17-ն են:

Տարեկան աշխատանքային պլանը (այսուհետ՝ ՏԱՊ) համայնքում առկա ֆինանսական, վարչական, մարդկային և սոցիալական ռեսուրսները կամ կապիտալները կառավարելու գործիք է, այն փաստաթուղթ է, ուր հստակորեն ներկայացվում են սոցիալական, տնտեսական, մարդկային, բնական և այլ ռեսուրսների ներդրման միջոցով համայնքի զարգացմանն ուղղված՝ տվյալ տարվա համար ՏԻՄ-երի ռազմավարությունները, ծրագրերը և միջոցառումները:<sup>1</sup>

### **Համայնքի ՏԱՊ-ը մշակվել է հետևյալ հիմնական նպատակներով՝**

- համակարգելու տեղական ինքնակառավարման մարմինների (այսուհետ՝ ՏԻՄ) տվյալ տարվա անելիքները,
- սահմանելու սոցիալ-տնտեսական զարգացման առաջնահերթությունները, գնահատելու համայնքի ներքին ռեսուրսները, հաշվառելու համայնքում ներդրվող արտաքին ռեսուրսները, հաշվարկելու համախառն ռեսուրսները և բացահայտելու պակասուրդը (դեֆիցիտը),
- համախմբելու համայնքում տվյալ տարվա համար նախատեսվող բոլոր ծրագրերը և միջոցառումները համայնքի հնգամյա զարգացման ծրագրով (այսուհետ՝ ՀՀԶԾ) սահմանված՝ համայնքի տեսլականի և հիմնական նպատակների իրականացման շուրջ,
- շաղկապելու նախատեսվող ծրագրերը և միջոցառումները դրանց իրականացման արդյունքների հետ՝ կիրառելով ՀՀԶԾ-ի ոլորտային ծրագրի «Տրամաբանական հենքը»,
- որոշակիացնելու նախատեսվող ծրագրերի և միջոցառումների իրականացման ֆինանսական աղբյուրները և միջոցները, պատասխանատուները և ժամկետները, մշակելու տվյալ տարվա ՏԱՊ-ի իրականացման ՄԳՊ-ը:

***Մասնավորապես, 2025թ. նախատեսվում է իրականացնել հետևյալ ծրագրերը.***

<sup>1</sup> «Մեթոդական ուղեցույց համայնքի տարեկան աշխատանքային պլանի մշակման», ԳՄՀԸ, ՀՖՄ, 2017:

- **Վարդենիս համայնքի Վարդենիս քաղաքի Լ.Ազգալոյան, Երիտասարդության, Անդրեասյան, 10 բազմաբնակարան շենքերի (Երիտասարդության 2 և 6, Արզոյան 2, Երիտասարդության 3, 11, 12, Վ. Համբարձումյան 17 և 19, Լեռնագործների 1/1 և 1/2 ) բակերի, Ակունք, Լուսակունք, Վանեվան, Ծովակ, Շատշրեք, Մեծ Մասրիկ բնակավայրերի համայնքային նշանակության փողոցների ասֆալտապատում:**

Վարդենիս քաղաքի Հ. Անդրեասյան, Լ. Ազգալոյան, Երիտասարդության փողոցները քաղաքի կենտրոնական փողոցներն են, այս փողոցներում են տեղակայված համայնքապետարանի, ոստիկանության, դատարանի, զինվորական կոմիսարիատի շենքերը, մի շարք սպասարկման կենտրոններ: Այս փողոցները ասֆալտապատվել են 2005-2008 թթ և ամեն տարի իրականացվում է փոսային նորոգման և ճաքալցման աշխատանքներ: Նշված փողոցները Վարդենիսի ամենածանրաբեռնված փողոցներից և մեծ նշանակություն ունեն համայնքի բնակիչների համար: Վարդենիս համայնքի Ակունք բնակավայրի կենտրոնական և համայնքային այլ փողոցներ հիմնականում հողային են կամ գրունտային, ողջ տարվա ընթացքում ցեխապատ են, դժվար երթևեկելի, իսկ ձմռան ամիսներին ձյան մաքրման աշխատանքները դժվար է իրականացվում այս փողոցներում:

Ծրագրի իրականացմամբ նախատեսվում է ասֆալտապատել Վարդենիս համայնքի Ակունք բնակավայրի Ս. Ավետիսյան փողոցը 360 գծամետր, Ակունք բնակավայրի գերեզմանոց տանող ճանապարհը՝ 600 գծամետր: Այս ճանապարհների ասֆալտապատմամբ կբարելավվի բնակիչների կյանքի որակը, երթևեկությունը և գյուղական բնակավայրերի արտաքին տեսքը: Վարդենիս համայնքի Լուսակունք, Վանեվան, Ծովակ, Մեծ Մասրիկ բնակավայրերի կենտրոնական և երկրորդային փողոցները գտնվում են անբարեկարգ վիճակում, երթևեկության համար դժվարանցանելի է: Ձմռան ամիսներին ճանապարհներն ամբողջությամբ դառնում են անանցանելի: Վարդենիս համայնքի Շատշրեք բնակավայրի 3-րդ և 7-րդ փողոցները կենտրոնական փողոցներ են, որոնք տանում են դեպի նորակառույց դպրոց: Բնակիչների կյանքի որակը բարելավվելու նպատակով խիստ անհրաժեշտություն է տվյալ փողոցների ասֆալտապատումը:

Վարդենիս քաղաքում կան 43 բազմաբնակարան շենքեր, որոնց բակերը կառուցման օրից չեն ասֆալտապատվել կամ հիմնանորոգվել: 2024 թվականին բազմաբնակարան շենքերի բակերից վեցը ասֆալտապատվել են: Ծրագրի իրականացմամբ նախատեսվում է ասֆալտապատել 10 բազմաբնակարան շենքերի՝ Երիտասարդության 2 և 6, Արզոյան 2, Երիտասարդության 3,11,12, Վ. Համբարձումյան 17 և 19, Լեռնագործների 1/1 և 1/2 բակերը, ընդհանուր 8987 քմ մակերեսով:

Այսպիսով ծրագրի իրականացմամբ նախատեսվում է ասֆալտապատել Վարդենիս քաղաքի Լ. Ազգալոյան փողոցը՝ 310մ, Երիտասարդության փողոցը՝ 500մ, Հ. Անդրեասյան փողոցը՝ 200գմ, 10 բազմաբնակարան շենքերի բակերը՝ 8987 քմ, Ակունք բնակավայրի Ս. Ավետիսյան փողոցը 360գմ, գերեզմանոց տանող ճանապարհը 600գմ, Շատշրեք 260 գծ և 240գծ, Վանեվան բնակավայրի Գարագաշի փողոցի 1100 գծմ, Մեծ Մասրիկ բնակավայրի 4-րդ փողոցի 490գծմ, Լուսակունք բնակավայրի 1-ին և գերեզմանոց տանող ճանապարհ 660 գծմ, Ծովակ բնակավայրի 2-րդ և 5-րդ փողոցներ 2200 գծմ:

**Ծրագրի իրականացման արդյունքում Վարդենիս խոշորացված համայնքում կասֆալտապատվի 6920 գծ ճանապարհ, 8987 քմ բակ, որի ուղղակի շահառուների թիվը կազմում է 25384 բնակիչ:**

- **Վարդենիս քաղաքի 10 բազմաբնակարան շենքերի տանիքների հիմնանորոգում:** Վարդենիս համայնքում կան 43 բազմաբնակարան բնակելի շենքեր, որոնցվի 27-ը Բանավան թաղամասում են գտնվում, իսկ 16-ը Վարդենիսի կենտրոնական թաղամասերում: Համայնքի բազմաբնակարան շենքերի մեծ մասը կառուցվել է 1950-1970 ական թվականներին, մի մասն էլ 1980-1990 ական թվականներին: Կառուցման օրից սկսած շենքերը երբևէ չեն վերանորոգվել, նախորդ տարիների ընթացքում բարեգործական և սուբվենցիոն ծրագրերի միջոցով վերանորոգվել են դրանցից 32-ի տանիքներ, իսկ 2019թ իրականացվող սուբվենցիոն ծրագրեր միջոցով բոլոր բազմաբնակարան շենքերի մուտքերի դռները և պատուհանները նորացվել են: Մյուս 10 բազմաբնակարան շենքերի տանիքները հիմնանորոգման խիստ անհրաժեշտություն ունեն: Վնասված տանիքների պատճառով անձրևաջրերից առաջացած կաթոցների հետևանքով բնակարանների և շքամուտքերի պատերը ամբողջովին վնասվել են, հատկապես աղետալի վիճակում են գտնվում առավել բարձր հարկերը: Կառուցման օրից շենքերի տանիքները ծածկվել են ազդողիֆերներով, որոնք արևի ճառագայթների ազդեցության ներքո արտանետում են ուռուցքաձին թույն, ինչն էլ բացասական ազդեցություն է թողնում բնակիչների առողջության վրա, ինչպես նաև առաջացնում է բնապահպանական խնդիրներ: Վարդենիսի համայնքապետարանը ծրագրի շրջանակներում նախատեսում է հիմնանորոգել 10 հատ բազմաբնակարան բնակելի շենքերի տանիքներ:

Ծրագրով նախատեսվում են հետևյալ աշխատանքները՝

- Հին տանիքների քանդում, հեռացում
- Փայտյա կարկասի կառուցում
- Նոր թիթեղյա տանիքների կառուցում
- Ծխատարների անցկացում

Ծրագրի իրականացման միջոցով հիմնանորոգվող 10 բազմաբնակարան շենքերում առկա բնակարանների քանակը 298 է, բնակվում են շուրջ 1192 բնակիչներ և ծրագրի իրականացմամբ կբարելավվի նրանց կյանքի որակը, կավելանա հարմարավետության ապահովման չափը: Ծրագրի իրականացման արդյունքում կհիմնանորոգվի 6973քմ մակերեսով տանիք:

- **Վարդենիս համայնքի Վարդենիսի թիվ 1, թիվ 2, Ակունք, մանկապարտեզների կապիտալ նորոգում:** Վարդենիս համայնքի զարգացման նախադրյալներից է որակյալ նախադպրոցական կրթության մատուցումը: Համայնքում գործող նախադպրոցական ուսումնական հաստատությունները երկար տարիներ շահագործվում են՝ երբևէ կապիտալ վերանորոգման չենթարկվելով: Ժամանակի շահագործվածության և նորագույն չափանիշներին համապատասխանեցնելու պահանջն առաջ է բերել համայնքի որոշ նախադպրոցական ուսումնական հաստատությունների հիմնանորոգման, շենքային պայմանների բարելավման խնդիր: Մասնավորապես կապիտալ վերանորոգման անհրաժեշտություն ունեն Վարդենիս քաղաքի թիվ 1, թիվ 2 մանկապարտեզները, Ակունքի Եղեմական մանկապարտեզը, Ծրագրի միջոցով նախատեսվում է կապիտալ վերանորոգել Վարդենիս, Ակունք բնակավայրերի մանկապարտեզների շենքերը:

Ծրագրի իրականացման միջոցով նշված բնակավայրերը կապահովվեն նախակրթական ծառայությունների մատուցմամբ, դա անհրաժեշտ է և պետական քաղաքականության տեսանկյունից և համայնքի ձևավորվող տեսլականի իրականացման տեսանկյունից, բոլոր բնակավայրերի նախադպրոցական տարիքի երեխաները պետք է ապահովվեն հասանելի նախադպրոցական կրթությամբ:

Մանկապարտեզների շենքերում կառուցման վերանորոգման աշխատանքներ իրականացնելիս պահպանել հենաշարժողական խնդիրներ ունեցող և տեղաշարժման սակավ հնարավորություններ ունեցող անձանց համար համապատասխան պայմանների ստեղծման և ապահովման պահանջը:

Էներգախնայողության և էներգաարդյունավետության բարձրացման նպատակով կիրառվող միջոցառումներին համապատասխան էլեկտրաէներգիայի ապահովման, ջեռուցման նպատակով օգտագործել ֆոտովոլտային պանելներ: Ծրագրի իրականացման արդյունքում Վարդենիս քաղաքի թիվ 1, թիվ 2, Ակունքի Եղեմական մանկապարտեզ ՀՈԱԿ-ները, որոնք երկար ժամանակ է շահագործվում են անբարեկարգ վիճակով և հին գույքով, ծառայություններ կսկսեն մատուցել բարեկարգ պայմաններում և ժամանակակից գույքով, կբարձրանա բնակիչների բավարարվածության մակարդակը մատուցվող ծառայություններից, կկանխվի արտագաղթը, երեխաները ավելի պատրաստված դպրոց կգնան և կբարձրանա կրթական մակարդակը, ծնողները հնարավորություն կունենան աշխատել:

- **Վարդենիս համայնքի Գեղամասար բնակավայրի ՕԿՋ-ների և կապտաժների հիմնանորոգում, Նորաբակ, Ակունք, Փամբակ, Լուսակունք, Ազատ, Ծովակ և Լճավան բնակավայրերում խմելու ջրի ջրագծերի կառուցում կամ վերակառուցում**

Խմելու ջուրը կենսական կարևոր նշանակություն ունի ցանկացած համայնքի բնակիչների կյանքում, և դրա հետ կապված խնդիրները պահանջում են հրատապ լուծում, քանի որ բնակիչների կյանքի որակը կախված է կենսական պայմանների բարելավումից: Վարդենիս համայնքի մի շարք բնակավայրեր ունեն խմելու ջրի հետ կապված խնդիրներ, այն է ջուր ունենու մ են օրվա որոշակի ժամերի կամ առհասարակ չեն ունենում և ստիպված են լինում երկար ճանապարհի անցնել տարաներով ջուր բերելու և կենցաղում օգտագործելու, ինչպես նաև խմելու համար: Վարդենիս համայնքում խմելու ջրի առկա խնդիրները լուծելու համար անհրաժեշտ է իրականացնել Գեղամասար բնակավայրի ՕԿՋ-ների և կապտաժների վերակառուցում, Նորաբակ բնակավայրի 3 փոքր աղբյուրակապերի, 1700 գծմ արտաքին և 200 գծմ ներքի ցանցի կառուցում, Ակունք բնակավայրի խմելու ջրի ջրագծի ներքին ցանցի 3000գծմ վերակառուցում, Փամբակ բնակավայրի 3000գծմ խմելու ջրամատակարարման համակարգի կառուցում, Լուսակունք բնակավայրի խմելու ջրի ջրագծի ներքին և արտաքին ցանցի 4500 գծմ հատվածի վերակառուցում, Ազատ բնակավայրի խմելու ջրի օրվա կարգավորող ջրամբարի և 1500 գծամետր արտաքին ցանցի կառուցում, Ծովակ բնակավայրի խմելու ջրի ջրագծի արտաքին ցանցի 1000 գծմ հատվածի վերակառուցում/ անցնում է գետի միջով/ և 2000գծմ ներքին ցանցի վերակառուցում և Լճավան բնակավայր 13000 գծ խմելու ջրի արտաքին ցանցի կառուցում: Նշված բնակավայրերում խմելու ջրի ջրագծեր կառուցումը կամ վերակառուցումը անհրաժեշտ է բնակավայրերի 10803 բնակիչների համար տարրական կենսապայմաններ ապահովելու նպատակով, որպիսզի նրանք ունենան բավարար խմելու ջուր և բացառվի խմելու ջրի միջոցով հիվանդությունների և/կամ համաճարակների տարածումը:

Այսպիսով ծրագրի իրականացման արդյունքում նախատեսվում է կառուցել կամ վերակառուցել 29900գծ խմելու ջրի ջրագծի ցանց, կապտաժներ, ջրամբարներ:

Ծրագրի արդյունքում շուրջ 5910 տնային տնտեսություն հնարավորություն կունենա օգտվելու խմելու ջրի նոր ցանցից:

- **Վարդենիս համայնքի փողոցների կոմունալ սպասարկում և բարեկարգում**  
Վարդենիս բազմաբնակավայր համայնք է, իր կազմում ընդգրկում է 1 քաղաքային և 34 գյուղական բնակավայրեր, որոնք աշխարհագրական դիրքերով միմյանցից տարբեր հեռավորության վրա են գտնվում: Մեզ մոտ ձմեռը ցուրտ է, առատ տեղումներով, բնակավայրեր տանող ճանապարհները հիմնականում յուրաքանչյուր ձյան տեղումից հետո դառնում են անանցանելի: Գյուղամիջյան և միջբնակավայրային ճանապարհները անցանելի դարձնելու համար «Կոմունալ տնտեսություն և սպասարկում» ՀՈԱԿ-ի տեխնիկաները շուրջօրյա ծառայություն են մատուցում: Համայնքի կոմունալ սպասարկում և բարեկարգում իրականացնող ՀՈԱԿ-ի բոլոր ծառայությունները

մատուցվում են համայնքային բյուջեից: Ծառայությունից օգտվում են 40030 բնակիչ: Աշխատանքների իրականացման ընթացքում աշխատանքի են անցել 10 բանավոր 5 վարորդ:

- **Վարդենիս քաղաքում փողոցների անվանումները մատնանշող ցուցանակների տեղադրում**  
Վարդենիսը շուրջ 40 գլխավոր փողոցներ ունեցող քաղաք է, սակայն փողոցների անվանումների ցուցանակներ տեղադրված են միայն դրանցից 8-ում և միայն քաղաքի կենտրոնական հատվածներում, իսկ մյուս փողոցներում դրանք բացակայում են: Բնակիչները, համայնքի հյուրերը, առաքման ծառայություններ իրականացնող կազմակերպությունները, քաղաքում նոր բնակություն հաստատող անձիք դժվարանում են տարածական կողմնորոշման ժամանակ:

**Վարդենիս համայնքի Գեղամաբակ բնակավայրում խորքային հորի կառուցում, Ծովակ բնակավայրում 910 զժմ ռոռզման ներքին ցանցի և սելաֆատարի կառուցում, Կախակն բնակավայրում 1500 զժմ ռոռզման ցանցի կառուցում և վերակառուցում, Ակունք բնակավայրում 2730 զժմ ռոռզման ցանցի կառուցում և վերակառուցում Ախպրաձոր բնակավայրում 1700 մ ռոռզման ջրի ջրագծի վերակառուցում:**

Վարդենիս համայնքը գյուղատնտեսական համայնք է, բնակչության հիմնական եկամտի աղբյուրը գյուղատնտեսությունից ստացվող ֆինանսական միջոցներն են, սակայն համայնքաբնակները հողագործությամբ զբաղվելիս հանդիպում են դժվարությունների ռոռզման հետ կապված: Համայնքում գյուղատնտեսության ծավալները մեծացնելու և այն խթանելու համար անհրաժեշտ է ռոռզման ցանցի ընդլայնում և վերակառուցում: Ծրագրի իրականացմամբ նախատեսվում է Գեղամաբակ բնակավայրում 1 խորքային հորի կառուցում, Ակունք բնակավայրի 2730զժմ ռոռզման համակարգի վերակառուցում, Ծովակ բնակավայր ներքին ցանցի և սելաֆատարի կառուցում՝ 910 զժ, Կախակն բնակավայրի ռոռզման ներքին ցանցի 1500 զժմ կառուցում, Ախպրաձոր բնակավայրի ռոռզման ջրի ջրագծի 1700մ: Նշված բնակավայրերում ընդհանուր առմամբ նախատեսվում է կառուցել 6840 զժ ռոռզման ջրագծի ցանց և 1 խորքային հոր, որը սպասարկելու է 1310 տնային տնտեսության: Այս ծրագրով նախատեսված ռոռզման ջրագծի կառուցումը անհրաժեշտ է բնակավայրերի 7618 բնակիչների համար տարրական կենսապայմաններ ապահովելու նպատակով, որպիսի նրանք ունենան բավարար ռոռզման ջուր և մշակովի հողատարածքներում մարդիկ կարողանան ավելի բարձր կարգի մշակաբույսեր մշակել և ավելի բարձր քանակի ու որակի բերք ստանալ:

**Վարդենիս համայնքի Կութ, Ջաղացաձոր, Շատջրեք, Ծովակ բնակավայրերի գերեզմանոցների ցանկապատում, Վարդենիս քաղաքի Գ. Կարապետյանի անվան զբոսայգու և Վարդենիս քաղաքի «Մուրբ Վարդան» ավանդական սրբատեղիի հիմնանորոգում, «Արցախյան պատերազմի զոհերի հիշատակի հուշահամալիր» կառուցում, «Վարդենիս քաղաքի Լ.Ազգալոյան, Երիտասարդության և Վ.Մանուկյան փողոցների խաչմերուկի հրապարակի» կառուցում:**

Վարդենիս խոշորացված համայնքը իր կազմում ունի 1 քաղաքային և 34 գյուղական բնակավայրեր և ցավով պետք է նշենք, որ 2020թ հակամարտության հետևանքով բոլոր բնակավայրերից հայրենիքի պաշտպանության համար եղան նահատակվածներ: Բոլոր բնակավայրերից ստացած բազմաթիվ դիմում առաջարկներ են եղել հենց բնակավայրում զոհվածների հիշատակը հավերժացնող հուշապուրակ կառուցելու մասին, քննարկման արդյունքում որոշվեց Վարդենիս քաղաքում կառուցել մեկ հուշահամալիր, որը նվիրված կլինի հայրենիքի պաշտպանության համար բոլոր նահատակվածների հիշատակին:

Վարդենիս քաղաքի կենտրոնում է գտնվում Գառնիկ Կարապետյանի անունը կրող զբոսայգին, որը 5937 քմ է, հնարավորություն ունի բացօթյա միջոցառումների անցկացման, սակայն գտնվում է անբարեկարգ վիճակում, ունի վերակառուցման անհրաժեշտություն:



Վարդենիս քաղաքի կենտրոնական հատվածում է գտնվում Լ. Ազգալոյան, Երիտասարդության և Վ. Մանուկյան փողոցների խաչմերուկը, որը հարում է նաև Գ. Կարապետյանի անվան զբոսայգուն: Խաչմերուկը անբարեկարգ վիճակում է գտնվում, տեղում երթևեկությունը անկանոն է: Ծրագրի իրականացմամբ նախատեսվում է նշված խաչմերուկում կառուցել պուրակ, որը կոգեկոչի նաև Արցախյան ազատամարտի մասնակից, Արցախի հերոս Լեոնիդ Ազգալոյանի հիշատակը: Քաղաքի ներքին տեսքը զբոսայգու կառուցումով հնարավորություն կտա նոր տուրիստական ուղղության զարգացմանը:

Վարդենիս քաղաքում է գտնվում Վարդան Մամիկոնյանի անունը կրող, տեղացիների անվանմամբ Սուրբ Վարդան կոչվող սրբավայր-պուրակը: Ըստ ավանդապատումների Ավարայրի ճակատամարտի ժամանակ Սպարապետ Վարդան Մամիկոնյանի զորքը անցել է ձմեռել է հենց այս տարածքում, որտեղից էլ առաջացել է տեղի անվանումը, դե իսկ տեղացիները այն նաև վերածել են սրբատեղիի՝ մեծ հավատ կապելով տեղի աստվածային ուժի հետ: Պուրակը նախորդ տարիների ընթացքում տեղացիների կողմից որոշակի հարդարման աշխատանքների ենթարկվել է, սակայն ունի կառուցապատման անհրաժեշտություն: Պուրակի կառուցումը համայնքում նաև զբոսաշրջության զարգացման նախադրյալներից է համարվում, քանի որ այն ունի պատմամշակութային արժեք, բավականին բարձրադիր վայրում է գտնվում, որտեղից տեսանելի է անգամ Սևանա լիճը, գետնի տակից հորդացող ունի բնական աղբյուրներ: Համայնքում զբոսաշրջությունը զարգացնելու համար կիրառելի կդառնա Սուրբ Վարդան սրբավայր-պուրակի, ինչպես նաև խոշորացված համայնքում առկա զբոսաշրջային ռեսուրսների փոխկապակցումից:

Վարդենիս համայնքի մի շարք բնակիչների կողմից բարձրացվել է բնակավայրերի գերեզմանոցների ցանկապատման հիմնախնդիրը: Վարդենիս համայնքի Կույթ, Ջաղացածոր, Շատջրեք, Ծովակ բնակավայրերի գերեզմանոցները ցանկապատված չեն, կենդանիները անարգել մուտք են գործում գերեզմանոցի տարածք, պատճառում վնասներ: Ծրագրի իրականացմամբ նախատեսվում է ցանկապատել նշված բնակավայրերի գերեզմանոցները:

**Համայնքի 2025թ. տարեկան աշխատանքային պլանը բաղկացած է 5 բաժիններից.**

**1-ին բաժնում** սահմանվում է համայնքի տեսլականը և ոլորտային նպատակները:

**2-րդ բաժնում** ներկայացվում է համայնքի 2025 թվականի ծրագրերի ցանկը և տրամաբանական հենքերը (ըստ ոլորտների):

**3-րդ բաժնում** ներկայացվում է համայնքային գույքի կառավարման 2025 թվականի ծրագիրը:

**4-րդ բաժնում** ներկայացվում է համայնքի ՏԱՊ-ի ֆինանսավորման պլանը:

**5-րդ բաժնում** ներկայացվում է համայնքի ՏԱՊ-ի մոնիթորինգի և գնահատման պլանը:

## 1. Համայնքի տեսլականը և ոլորտային նպատակները

Համայնքի տեսլականը՝ համայնքը անվտանգ, բարեկարգ, էկոլոգիապես մաքուր գյուղատնտեսական մթերքներ արտադրող, բնակչության զբաղվածությունն ապահովող համայնք է:

### Աղյուսակ 1. Համայնքի կայուն զարգացման ցուցանիշները

Ցուցանիշ	Ելակետային արժեք	Թիրախային արժեք
Աղքատության շեմից ցածր գտնվող ընտանիքների թվի տեսակարար կշիռը համայնքի ընտանիքների ընդհանուր թվի մեջ (%)	25	22
Համայնքի բյուջեի սեփական եկամուտների տեսակարար կշիռն ընդհանուր եկամուտների մեջ (%)	29,6	31,0
Համայնքում հաշվառված բնակիչների ընդհանուր թիվը (մարդ)	39.162, որից 20.301 տղամարդ, 18.861 կին	39.500
Համայնքում տվյալ տարվա ընթացքում ներդրումների ծավալը (հազ. դրամ)	50.000.000	50.000.0
Համայնքում գործող ՓՄՁ-ների քանակը և դրանցում աշխատատեղերի թիվը (հատ)	126/157, որից 82 կին, 75 տղամարդ	130/180

### Աղյուսակ 2. Համայնքի ոլորտային նպատակները

Ոլորտային նպատակ	Վերջնական արդյունքի՝		
	Ցուցանիշ	Ելակետային արժեք	Թիրախային արժեք
<b>Ոլորտ 1. Ընդհանուր</b> Ապահովել ՏԻՄ-երի կողմից համայնքի բնակչությանը համայնքային որակյալ և մատչելի ծառայությունների մատուցումը	Համայնքի բնակիչների բավարարվածությունը ՏԻՄ-երի, աշխատակազմի, ՀՈԱԿ-ների գործունեությունից, մատուցված հանրային ծառայություններից (հարցումների հիման վրա) որից կանանց գնահատականը ավելի շատ լավ ան	Ավելի շատ լավ, քան վատ	Ավելի շատ գերազանց, քան լավ

	վատ, տղամարդկանց գնահատականը միջին		
	Համայնքի բյուջեի սեփական եկամուտների տեսակարար կշիռը համայնքի բյուջեի ընդհանուր մուտքերի կազմում, %	29,6	31
<b>Ոլորտ 2. Պաշտպանության կազմակերպում</b> Համայնքային պատսպարանների բարեկարգում, նոր պատսպարանների և թաքստոցների կառուցում	Համայնքի բնակիչների և հատկապես սահմանամերձ բնակավայրերի բնակիչների անվտանգության մակարդակի բարձրացում	վատ	Ավելի շատ լավ, քան վատ
<b>Ոլորտ 3. Արտակարգ իրավիճակներից բնակչության պաշտպանություն և քաղաքացիական պաշտպանության կազմակերպում</b> Բարձրացնել արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության կազմակերպման պատրաստականության մակարդակը	Համայնքում արտակարգ իրավիճակներին արագ արձագանքելու պատրաստականությ ան մակարդակը	Ավելի շատ վատ, քան լավ	Ավելի շատ լավ, քան վատ
<b>Ոլորտ 4. Քաղաքաշինություն և կոմունալ տնտեսություն</b> Բարելավել քաղաքաշինության և կոմունալ ծառայության բնագավառում համայնքի բնակչությանը հանրային ծառայությունների մատուցումը և որակը	Գիշերային լուսավորված փողոցների թվի տեսակարար կշիռն ընդհանուրի մեջ, %  Բնակիչների բավարարվածությո ւնը համայնքում գիշերային լուսավորվածությու նից (հարցումների հիման վրա), որից կանանց գնահատականը բավականին լավ, տղամարդկանց	65	75
		լավ	բավական ին լավ

	գնահատականը բավականին լավ		
	Բնակիչների բավարարվածությունը բնակարանային շինարարության ուլորտում մատուցված ծառայություններից (հարցումների հիման վրա), որից կանանց գնահատականը ավելի շատ լավ, տղամարդկանց գնահատակար լավ	Ավելի շատ լավ, քան վատ	Ավելի շատ գերազանց , քան լավ
	Ճանապարհային երթևեկությունը կարգավորող լուսացույցների առկայություն համայնքի բնույթ փոփոխություն	Ավելի շատ լավ, քան վատ	Լավ
<b>Ոլորտ 5. Հողօգտագործում</b> Համայնքի հողային ֆոնդի գույքագրում, մոնիթորինգ	Վերահաշվարկել խոշորացված համայնքի հողային ֆոնդը, մոնիթորինգ իրականացնել դրանց օգտագործման ծավալների վերաբերյալ	բավարար	Լավ
<b>Ոլորտ 6. Տրանսպորտ</b> Բարձրացնել համայնքային ենթակառուցվածքի ճանապարհների և ինժեներական կառույցների սպասարկման, շահագործման և պահպանման ծառայությունների որակը և ապահովել ճանապարհային անվտանգ երթևեկությունը	Համայնքային ենթակառուցվածքի ճանապարհների և ինժեներական կառույցների սպասարկման, շահագործման և պահպանման ծառայությունների որակից բնակչության բավարարվածությ ան աստիճանը (հարցումների հիման վրա), որից կանանց	բավարար	Ավելի շատ լավ,

	գնահատականը միջին, տղամարդկանց գնահատականը ոչ վատ ոչ լավ		
	Բարեկարգ և անցանելի ներհամայնքային փողոցների մակերեսի տեսակարար կշիռն ընդհանուրի կազմում, %,	75	85
	Բարեկարգ, անվտանգ անցումներով և լուսացույցներով խաչմերուկների տեսակարար կշիռն ընդհանուրի կազմում %,	50	70
	Բարեկարգ և հարթակներով մայթերի տեսակարար կշիռն ընդհանուր երկարության մեջ %,	35 /հարթակներ չկան/	50 /հարթակներով/
<b>Ոլորտ 7. Առևտուր և ծառայություններ</b> Բարձրացնել առևտրի և սպասարկման ոլորտի կողմից բնակիչներին մատուցվող ծառայությունների որակը	Համայնքի վարչական տարածքում գտնվող առևտրի և սպասարկման ծառայությունների որակի բարձրացում, առավել որակյալ և հասանելի ծառայությունների մատուցում	Ավելի շատ լավ, քան վատ	Բավականին լավ
<b>Ոլորտ 8. Կրթություն</b> Ապահովել համայնքի բնակչությանը նախակրթական և արտադպրոցական կրթության որակյալ ծառայությունների մատուցումը և ընդլայնումը:	ՏԻՄ-երի, կրթական հաստատությունների գործունեությունից, մատուցված ծառայությունների	Լավ	Գերազանց

	որակից և մատչելիությունից բնակչության բավարարվածության աստիճանը (հարցումների հիման վրա)–լավ, որից կանանց գնահատականը բավականին լավ, տղամարդկանց գնահատականը բավականին լավ		
<b>Ոլորտ 9. Մշակույթ և երիտասարդության հետ տարվող աշխատանքներ</b> Կազմակերպել համայնքի մշակութային կյանքը, խթանել մշակութային միջոցառումների և բնակիչների ակտիվ մասնակցությունը	Համայնքի մշակութային կյանքին բնակիչների ակտիվ մասնակցության աստիճանը	լավ	Գերազանց
<b>Ոլորտ 10. Առողջապահություն</b> Ապահովել առողջապահության ոլորտի հասանելիությունը բնակչությանը, առողջապահական հաստատությունները վերազինել ժամանակակից բժշկական տեխնոլոգիաներով	Համայնքում գործող բժշկական հաստատություններում ավելացնել անհրաժեշտ սարքավորումները, աշխատուժը համալրել պահանջված մասնագետներով	լավ	Գերազանց
<b>Ոլորտ 11. Ֆիզիկական կուլտուրա և սպորտ</b> Համայնքում սպորտի զարգացման համար ստեղծել նախադրյալներ	Համայնքի ապահովվածությունը մարզադաշտերով և մարզադպրոցներով , %	միջին՝ ոչ լավ, ոչ վատ	Ավելի շատ լավ, քան վատ
<b>Ոլորտ 12. Սոցիալական պաշտպանություն և ծառայությունների մատուցում</b> Բարելավել համայնքի կարիքավոր ընտանիքների սոցիալական վիճակը	Սոցիալական ծրագրերից շահառուների բավարարվածությունը (հարցումների հիման վրա)	լավ	գերազանց
Ապահովել երիտասարդների և երիտասարդ ընտանիքների սոցիալական խորհրդատվություն և իրազեկում	Համայնքի բնակիչների բավարարվածությունը սոցիալական աշխատողի միջոցով	լավ	Բավականին լավ

	երիտասարդներին և երիտասարդ ընտանիքներին սոցիալական խորհրդատվության միջոցով մատուցած ծառայություններից , որից կանանց գնահատականը լավ, տղամարդկանց գնահատականը լավ		
<b>Ոլորտ 13. Գյուղատնտեսություն</b> Նպաստել համայնքում գյուղատնտեսության զարգացմանը	Գյուղատնտեսակա ն տեխնիկայի մատչելիությունը բնակավայրերում %	<b>45</b>	<b>55</b>
<b>Ոլորտ 14. Անասնաբուժություն և բուսասանիտարիա</b> Բարձրացնել անասնաբուժական ծառայությունների մատուցման որակը	Խթանել համայնքում անասնաբուժական և բուսասանիտարակ ան ծառայությունների մատուցման ծավալները	բավարար	լավ
<b>Ոլորտ 15. Շրջակա միջավայրի պահպանություն</b> Ապահովել համայնքի բոլոր բնակավայրերում բնակչությանը աղբահանության և սանիտարական մաքրման որակյալ և մատչելի ծառայությունների մատուցումը և շրջակա միջավայրի պահպանությունը	Համայնքի բնակիչների բավարարվածությո ւնը մատուցված աղբահանության և սանիտարական մաքրման ծառայություններից (հարցումների հիման վրա), որից կանանց գնահատականը՝ լավ, տղամարդկանց գնահատականը՝ լավ	Լավ	Բավական ին լավ
<b>Ոլորտ 16. Զբոսաշրջություն</b> Բարենապաստ պայմաններ ստեղծել համայնքում զբոսաշրջության զարգացման համար	Համայնք այցելած զբոսաշրջիկների թվի աճը	միջին՝ ոչ լավ, ոչ վատ	Ավելի շատ լավ, քան վատ



<p><b>Ոլորտ 17. Տեղական ինքնակառավարմանը քնակիչների մասնակցություն</b>  Ապահովել տեղական ինքնակառավարման գործունեությանը թափանցիկությունը և բնակչության իրազեկումը</p>	<p>Համայնքի բնակիչների իրազեկվածությունը և մասնակցությունը ՏԻՄ գործունեությանը, որից կանանց գնահատականը՝ լավ, տղամարդկանց գնահատականը՝ վատ</p>	<p>լավ</p>	<p>Բավականին լավ</p>
<p>Կանանց ներգրավվածությունը ՏԻՄ կազմում</p>	<p>Համայնքապետարանի աշխատակազմը, որից կանայք</p>	<p>133/ 38 կին</p>	<p>137/ 45 կին</p>

Համայնքի 2025 թ. ծրագրերի ցանկը և տրամաբանական հենքերը (ըստ ոլորտների)

Աղյուսակ 3. ՏԱՊ-ի ծրագրերը, որոնք ապահովված են համապատասխան ֆինանսական միջոցներով

Հ/հ	Ծրագրի անվանումը	Ծրագրի արժեքը (հազ. դրամ)	Բնակավայր(եր)ը
<b>Ոլորտ 1. Ընդհանուր</b>			
1.	Համայնքի աշխատակազմի պահպանություն, հանրային որակյալ ծառայությունների մատուցում	1884867.7	Բոլոր բնակավայրերում
<b>Ընդամենը</b>		1884867.7	
<b>Ոլորտ 3. Արտակարգ իրավիճակներից բնակչության պաշտպանություն և քաղաքացիական պաշտպանության կազմակերպում</b>			
1.	Արտակարգ իրավիճակներում բնակչության քաղաքացիական պաշտպանության կազմակերպման պատրաստվածության և իրազեկվածության բարձրացում	10.000.0	Բոլոր բնակավայրերում
<b>Ընդամենը</b>		<i>10.000.0</i>	
<b>Ոլորտ 4.Քաղաքաշինություն և կոմունալ տնտեսություն</b>			
1	Համայնքի փողոցների կոմունալ սպասարկում և բարեկարգում	278 000,0	Բոլոր բնակավայրերում
2	Ճանապարհների ասֆալտապատում	1376484.6	Վերը նշված բնակավայրերում
3	Ոռոգման ցանցի կառուցում	636358.5	Վերը նշված բնակավայրերում
<b>Ընդամենը</b>		<i>1290843.1</i>	
<b>Ոլորտ 6. Տրանսպորտ</b>			
1.	Համայնքի բնակավայրերի ջրամատակարարման խմելու ջրի ջրագծերի կառուցում և կապ նորոգում	150000.0	Վերը նշված բնակավայրերում
2.	փողոցների լուսավորության անցկացում Պահպանում և շահագործում	235000.0	Վերը նշված բնակավայրերում
<b>Ընդամենը</b>		<i>385000.0</i>	
<b>Ոլորտ 8.Կրթություն</b>			
1.	Համայնքում նախադպրոցական կրթության ծառայության մատուցում/608 շահառու, 120 ընտանիքից/	321889.1	Բոլոր բնակավայրերում

2.	Համայնքում արտադարձական դաստիարակության ծառայության մատուցում	206295.4	Բոլոր բնակավայրերում
3.	Վարդենիսի թիվ 1, թիվ 2, Ակունքի մանկապարտեզների կապիտալ նորոգում	645589.3	Վարդենիս, Ակունք
<b>Ընդամենը</b>		1173773.8	
<b>Ոլորտ 9.Մշակույթ և երիտասարդության հետ տարվող աշխատանքներ</b>			
1.	Համայնքում մշակութային կյանքի կազմակերպում	186876.5	Բոլոր բնակավայրերում
<b>Ընդամենը</b>		186876.5	
<b>Ոլորտ 12.Սոցիալական պաշտպանություն</b>			
1.	Աջակցություն սոցիալապես անապահով ընտանիքներին	38800.0	Բոլոր բնակավայրերում
<b>Ընդամենը</b>		38800.0	
<b>Ոլորտ 15.Շրջակա միջավայրի պահպանություն</b>			
1.	Համայնքի բոլոր բնակավայրերում աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների մատուցում	28165.4	Բոլոր բնակավայրերում
<b>Ընդամենը</b>		28165.4	
<b>Ընդհանուրը</b>		<b>3904892.6</b>	

Աղյուսակ 4. ՏԱՊ-ի ծրագրերը, որոնք ապահովված չեն համապատասխան ֆինանսական միջոցներով

Հ/հ	Ծրագրի անվանումը	Ծրագրի արժեքը (հազ. դրամ)	ԲԲՀ-ի բնակավայրը
<b>Ոլորտ 1. Ընդհանուր</b>			
1.	Ավագանու նիստերի առցանց հեռարձակման համար սարքավորումների ձեռքբերում	900,0	Բոլոր բնակավայրեր
<b>Ընդհանուրը</b>		<b>900,0</b>	<b>-</b>
Հ/հ	Ծրագրի անվանումը	Ծրագրի արժեքը (հազ. դրամ)	ԲԲՀ-ի բնակավայրը
<b>Ոլորտ 4. Գյուղատնտեսություն</b>			
1.	Հակակարկտային կայանների ձեռք բերում	7200.0	Գեղամասար, Նորակերտ, Արփունք
<b>Ընդհանուրը</b>		<b>7200,0</b>	<b>-</b>
<b>Ոլորտ 10. Քաղաքաշինություն և կոմունալ տնտեսություն</b>			
1.	Ջրահեռացման համակարգի կառուցում	31500.0	Վարդենիս, Գեղամասար, Ակունք
2.	Ջրաչափական հորերի և կապտածների կառուցում	30000.0	Բոլոր բնակավայրեր
3.	Փողոցների հասցեները մատնանշող ցուցանակների տեղադրում	900,0	Վարդենիս
4.	Աղբավայրերի ցանկապատման աշխատանքների իրականացում	6500,0	Վարդենիս
5.	Միեր Մկրտչյանի անվան մշակույթի պալատի դահլիճի բեմի վերանորոգում	1000,0	Վարդենիս
6.	Միեր Մկրտչյանի անվան մշակույթի պալատի ֆոեի կահավորում	1000.0	Վարդենիս
7.	Մարզադաշտի վերակառուցում	300000,0	Վարդենիս
<b>Ոլորտ 12. Կրթություն</b>			
1.	Նախադպրոցական ուսումնական հաստատությունների (ՆՈԻՀ) կահավորում	1500.0	
<b>Ոլորտ 13. Մշակույթ և երիտասարդության հետ տարվող աշխատանքներ</b>			
1.	Մշակույթի տան նորոգում	6000.0	Ակունք
2.	Հանդիսությունների սրահի վերանորոգում	57000.0	Շովակ, Ակունք, Կարճաղբյուր
<b>Ընդհանուրը</b>			

Աղյուսակ 5. ՏԱՊ-ով նախատեսված ծրագրերի տրամաբանական հենքերը՝ ըստ համայնքի ղեկավարի լիազորությունների ոլորտների

Ամփոփ նկարագիր	Արդյունքային ցուցանիշներ	Տեղեկատվության աղբյուրներ	Պատասխանատու	Ժամկետ	Ռիսկեր
<b>Ոլորտ 1. Ընդհանուր</b>					
<b>Ոլորտային նպատակ</b> Բարելավել համայնքի բնակչությանը մատուցվող հանրային ծառայությունների որակը		<b>Ոլորտի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ</b> <ul style="list-style-type: none"> <li>✓ Համայնքի բնակիչների բավարարվածությունը (հարցումների հիման վրա) ՏԻՄ-երի գործունեությունից, մատուցվող հանրային ծառայություններից, 90%</li> <li>✓ Համայնքի բնակիչների մասնակցությամբ ՏԻՄ-երի (համայնքի ղեկավարի, համայնքի ավագանու) կողմից կայացված որոշումների թվի տեսակարար կշիռը կայացված որոշումների ընդհանուր թվի մեջ, 10%</li> <li>✓ Համայնքի բյուջեի սեփական եկամուտների տեսակարար կշիռը համայնքի բյուջեի ընդհանուր մուտքերի կազմում, 33%</li> <li>✓ ՏԻՄ-երի կողմից մատուցվող համայնքային (հանրային, ոչ վարչական բնույթի) ծառայությունների հասանելիությունը համայնքի կենտրոն չհանդիսացող բնակավայրերի բնակիչներին, 90%</li> </ul>			
<b>Ծրագիր 1. Ընդհանուր բնույթի համայնքային ծառայությունների մատուցում</b>					
<b>Ծրագրի նպատակ</b> Ապահովել համայնքի աշխատակազմի բնականոն գործունեությունը, բարելավել բնակչությանը մատուցվող հանրային ծառայությունների որակը	<b>Ծրագրի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ</b> Բնակչությանը մատուցվող հանրային ծառայությունների որակի բարելավում, 15%	Ծրագրի գնահատման համակարգ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ	Համայնքի ղեկավար, աշխատակազմի քարտուղար, բնակավայրերի վարչական ղեկավարներ	2025թ. հունվար - դեկտեմբեր	Համապատասխան մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների առկայություն
<b>Միջանկյալ արդյունք 1</b> Ապահովվել է աշխատակազմի	<b>Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ)</b>	Աշխատակազմ, ՄԳ կիսամյակային, տարեկան	Համայնքի ղեկավար, աշխատակազմի	2025թ. հունվար -	Համապատասխան մարդկային և

<p>բնականոն գործունեությունը</p>	<ol style="list-style-type: none"> <li>1. Համայնքի աշխատակազմի աշխատողների թիվը, 234.5</li> <li>2. Համայնքի ենթակայության կազմակերպությունների թիվը, 21</li> <li>3. Անշարժ գույքի հարկի բազայում առկա անճշտությունների նվազեցում, 4%</li> <li>4. Համայնքի աշխատակազմի աշխատանքային օրերի թիվը տարվա ընթացքում, 252 օր</li> <li>5. Համայնքի պաշտոնական համացանցային կայքի առկայությունը, այո</li> <li>6. ՏԻՄ-երի, աշխատակազմի գործունեության վերաբերյալ բնակիչների կողմից ստացվող դիմում-բողոքների թվի նվազում, 2 %-ով</li> <li>7. Աշխատակազմում առկա տեղեկատվական և հեռահաղորդակցության համակարգերի օգտագործման մակարդակը՝ 80%</li> <li>8. Աշխատակազմում ստացված մեկ դիմումին պատասխանելու միջին ժամանակը, 4 օր</li> </ol>	<p>հաշվետվություններ, քաղաքացիական հասարակության կազմակերպություններ և խմբեր, բնակիչներ</p>	<p>քարտուղար, վարչական ղեկավարներ</p>	<p>դեկտեմբեր</p>	<p>Ֆինանսական ռեսուրսների առկայություն</p>
<p><b>Միջոցառումներ</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. Աշխատակազմի բնականոն գործունեության ապահովում</li> <li>2. Համայնքի հողի հարկի և գույքահարկի գանձման ավտոմատացված համակարգերի սպասարկման վճարների կատարում</li> <li>3. Համայնքապետարանի և Այրք, Ավագան, Արեգունի, Արփունք, Ախպրաձոր, Ազատ, Գեղամաբակ, Գեղաքար, Գեղամասար, Լճավան, Կախակն, Կույթ, Կուտական, Մ. Մասրիկ, Տորֆավան, Վաննան, Լորակերտ, Փ. Մասրիկ, Կարճաղբյուր, Ծովակ, Խաչաղբյուր, Վարդենիս, Փամբակ, Շատվան, Լուսակունք, Մաքենիս, Ն. Շորժա, Լորաբակ, Շատջրեք, Ջաղացաձոր, Սոթք, Վ. Շորժա, Տրետուք, Ակունք, Դարանակ բնակավայրերի վարչական</li> </ol>		<p><b>Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ)</b></p> <ol style="list-style-type: none"> <li>1. Համայնքի տարեկան բյուջեով նախատեսված պահպանման ծախսեր՝ 1884867.7 հազ. դրամ</li> <li>2. Համայնքի աշխատակազմի աշխատողներ՝ 234.5</li> <li>3. Համայնքի հողի հարկի և գույքահարկի գանձման ավտոմատացված համակարգեր՝ 1</li> <li>4. Համայնքապետարանի վարչական շենք և գույք</li> <li>5. Վարչական ներկայացուցիչների նստավայրերի շենքեր և գույք</li> <li>6. Աշխատակազմում առկա համակարգչային սարքերի և սարքավորումների թիվը 102</li> <li>7. Համայնքի պաշտոնական համացանցային կայք՝ <a href="http://vardenis.am">http://vardenis.am</a></li> <li>8. Աշխատակազմում առկա տեղեկատվական և հեռահաղորդակցության համակարգեր 2</li> </ol>			

<p>ղեկավարների նստավայրերի շենքերի և գույքի ընթացիկ նորոգման, նոր գույքի ձեռք բերման աշխատանքների իրականացում:</p>	
--	--

**Ոլորտ 2. Պաշտպանության կազմակերպում, քաղաքացիական պաշտպանություն**

<p>Բնակչության անվտանգության ապահովման կազմակերպում</p>	<p><b>Ծրագրի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ</b> Բնակիչները, որոշ չափով, պաշտպանված են, գիտեն ինչպես վարվել տագնապների դեպքում: Համայնքն ունի անհրաժեշտ հմտություններ և ռեսուրսներ բնակչությանը տարհանելու կամ ապաստանելու համար:</p>	<p>Ծրագրի գնահատման համակարգ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ</p>	<p>Համայնքի ղեկավար, բնակավայրերի վարչական ղեկավարներ</p>	<p>2025թ. հունվար - դեկտեմբեր</p>	<p>Համապատասխան մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների առկայություն</p>
<p><b>Միջանկյալ արդյունք 1</b> Բնակչության անվտանգության ապահովման կազմակերպում</p>	<p><b>Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ)</b> 1, Շչակների առկայություն համայնքի 15 բնակավայրերում 2, Տարհանման պլանի առկայություն, 3. վերապատրաստում անցած մասնագետներ</p>	<p>Աշխատակազմ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ, քաղաքացիական հասարակության կազմակերպություններ և խմբեր, բնակիչներ</p>	<p>Համայնքի ղեկավար, վարչական ղեկավարներ</p>	<p>2025թ. հունվար – դեկտեմբեր</p>	<p>Համապատասխան մարդկային և ֆինանսական ռեսուրսների առկայություն</p>

<p><b>Միջոցառումներ</b> 4. Աշխատակազմի հետագա վերապատրաստում, 5. Փորձնական տագնապների անցկացում 6. Ապաստարանների կահավորում</p>	<p><b>Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ)</b> 1, Ապաստարանի համար շենքային պայմաններ 2, Համագործակցություն պետական մարմինների հետ</p>
---	---

**Ոլորտ 3. Արտակարգ իրավիճակներից բնակչության պաշտպանություն**

<p>Տարերային աղետներից, սելավներից, զարնանային հեղեղումներից, վթարային շենքերից բնակիչների պաշտպանության կազմակերպում, տուժած բնակիչներին մասնակի նյութական, աշխատանքային օգնության տրամադրում</p>	<p><b>Ծրագրի ազդեցության (վերջնական արդյունքի) ցուցանիշ</b></p> <p>1, Բնակիչները և համայնքի աշխատակիցները գիտեն ինչ միջոցառումներ ձեռնարկեն արտակարգ իրավիճակներում</p> <p>2, Առկա է անհրաժեշտ նյութական բազա, բնակչությանն անհրաժեշտ առաջին օգնություն ցույց տալու համար</p> <p>3, Ստեղծված են պայմաններ կանխատեսելի աղետները կանխելու համար</p>	<p>Ծրագրի գնահատման համակարգ, ՄԳ կիսամյակային, տարեկան հաշվետվություններ</p>	<p>Համայնքի ղեկավար, աշխատակազմ, բնակավայրերի վարչական ղեկավարներ</p>	<p>2025թ. հունվար - դեկտեմբեր</p>	<p>Համապատասխան մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների առկայություն</p>
